

ՄԱՀՈՒԱՆ ՏԵՍԻԼՔ

Կոտորած, կոտորած, կոտորած...
Քաղաքներուն մէջ եւ քաղաքներէն դուրս,
Եւ բարբարոսներն արիւններով կը դառնան,
Մեռելներուն ու ոգեւարներուն վրայէն,
Ազոտներու բազմութիւններ կ'անցնին վերերէն,
Արիւնոտ բերաններով ու գինովի քրքիջներով...
Ցամաքահով մը կիսամեռները զայրոյթով կը խղդէ
Ու պառտներու անձայն կարտւաններ,
Շտապով կը փախչին լայն ճամբաներէն...:
Գիշերին մէջէն արիւններուն ալիքը կը բարձրանայ
Ծառերուն հետ շատրուաններ ուրուագծելով,
Ու ամէն կողմէ սոսկումով կը սուրան հալածուած՝
Նախիրները հրդեհուող ցորեաններուն մէջէն...
Փողոցներուն մէջ մորթուած սերունդներ կը տեսնեմ,
Եւ ամբոյխներ անպատմելի սրածութենէ դարձող,
Արեւադարձային տաքութիւն մը կը բարձրանայ,
Հրդեհի տրուած ազնուական քաղաքներէն...
Ու մարմարի ծանրութիւնով իջնող ձիւնին տակ,
Աւերակներուն եւ մեռելներուն մենութիւնը կը մսի,
Օ՛, մոիկ ըրէք սա՛ սայլերուն ճոնչիւնն ահաւոր,